ՎԵՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ AG0004 (ՀՀ-ԼՄՄՀ-ՄԱԾՁԲ-19/16)

ք. Վանաձոր «02» հուլիսի 2019 թ.

<<ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկը ի դեմս Ստեփանավան համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և Անհատ ձեռնարկատեր Արտյոմ Սաքանյանը, այսուհետ՝ «Կատարող», պետական հաշվառման համարը 26.890934, մյուս կողմից, կնքեցին **սույն պայմանագիրը** հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ կատարել ՀՀ Լոռու **մարզի Ստեփանավան համայնքին** պատկանող անշարժ գույքերի չափագրում:

1.3. Ծառայությունների մատուցման ժամկետն է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը:

1.3.1. ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման- ընդունման արձանագրության ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ:

2.1.3. Պատվիրատուի պահանջով 10 օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը.

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ:

3.1 3.2. «Պատվիրատու»-ի կողմից «Կատարող»-ին պայմանագրային գինը վճարվում է է սույն պայմանագրի կատարումից և հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումից հետո 5 **բանկային** օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների մատուցման կամ 3.2 կետում նշված վճարման ժամկետների խախտման համար խախտող կողմը մյուս կողմին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի արժեքի 0,15 տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները նրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ ք. Ստեփանավան, Ս. Սարգսյան 1 ՀՎՀՀ 06954104 ՀՀ Ֆին.նախ. գործառնական վարչություն ՀՀ 900252101440	Արտյոմ Սաքանյան Ա/Ձ Վանաձոր Խնձորուտ 4 փ. 12 ՀՎՀՀ 80999072 ԲԱՆԿ «ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ» Լոռի մ/ճ ՀՀ 2050232171311001 Ա. Սաքանյան
ստորագրություն Կ. Տ	ստորագրություն Կ. Տ